



ՄԱՍԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

14 հունիսի, 2014թ.

ք. Երևան

«Հակակոռուպցիոն ուսուցում» Շիրակի մարզի ՔՀԿ-ների և ՋԼՄ-ների համար

2014 թվականի հունիսի 11-ից-13-ը Գյումրի քաղաքում տեղի ունեցավ եռօրյա հակակոռուպցիոն ուսուցում Շիրակի մարզի ՔՀԿ-ների և ՋԼՄ-ների համար:

«Այս ուսուցումների ընթացքում, բնականաբար, նոր հմտություններ, նոր գիտելիքներ ձեռք կբերեք», - ասաց Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի նախագահ, «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրի ղեկավար Կարեն Զադոյանը:

«Օրագրի շրջանակներում մենք բազմիցս ակնաստես ենք եղել խնդիրների, որոնք կարելի է լուծել համատեղ ուժերով», - նշեց «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրի ռեգիոնալ համակարգող, փորձագետ Գայանե Գևորգյանը:

Ո՞րն է ՔՀԿ-ների և ՋԼՄ-ների դերը կոռուպցիայի դեմ պայքարի գործում, որո՞նք են տեղեկատվություն ստանալու մեխանիզմներն ու աղբյուրները, ինչպե՞ս իրակայացնել լրագրողական հետաքննություններ: Այս և այլ հարցերը ուսուցման եռօրյա ծրագրի օրակարգում են եղել: Միջոցառմանը մասնակցեցին Շիրակի մարզի քաղաքացիական հասարակության կազմակերպությունները և ՋԼՄ-ները:

Օրագրի հիմնական նպատակն է մեծացնել քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ) դերը հակակոռուպցիոն բարեփոխումների խթանման և իրականացման գործում: Օրագրի շրջանակներում կհզորացվեն ՔՀԿ-ների և ՋԼՄ-ների մոնիթորինգի և վերահսկողության կարողությունները: Կկազմակերպվեն հակակոռուպցիոն դասընթացներ ՀՀ մարզերում ՔՀԿ-ների և ՋԼՄ-ների համար՝ կոռուպցիոն բնույթի և տեղեկատվության ազատության խնդիրներն առավել լավ ըմբռնելու համար: Այս միջոցառումների նպատակը հակակոռուպցիոն գործողությունների իրականացման առկա հնարավորությունների խորացումն է: Հանրային վերահսկողության արդյունավետության բարձրացման և համապատասխան մոնիթորինգային, վերահսկողական և հետաքննական ծրագրերի իրականացման նպատակով կտրամադրվեն փոքր դրամաշնորհներ: Հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ մեխանիզմների ամրապնդման համար ՔՀԿ-ների մասնակցությամբ կմշակվի ՔՀԿ-կառավարություն կայուն երկխոսություն:

Օրագիրն իրականացվում է Եվրոպական միության ֆինանսական օժանդակությամբ՝ «Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» ՀԿ-ի կողմից (իրականացնող)՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի հետ համագործակցությամբ (գործընկեր): Օրագրի տևողությունը 3 տարի է (2014 թվականի հունվարից 2016 թվականի դեկտեմբեր): Օրագրի բյուջեն կազմում է 650.000 Եվրո:

Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիան (ՀԵԻԱ) ստեղծվել է 1995թ.-ին: ՀԵԻԱ-ի առաքելությունն է նպաստել Հայաստանում իրավունքի գերակայության, ժողովրդավարության և քաղաքացիական հասարակության կայացմանը, որտեղ բնակչությունը իրագրել է, իսկ նրա իրավունքները պաշտպանված:

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը (ԻԱԿ) գործում է ավելի քան 10 տարի: ԻԱԿ-ի առաքելությունն է նպաստել տեղեկատվության ազատության մասին օրենսդրության կիրառմանը, ՀՀ կառավարման համակարգի թափանցիկությանն ու հրապարակայնությանը և այդ համակարգում քաղաքացիական հասարակության մասնակցության ապահովմանը:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք դիմել.

Օրագրի հանրային կայքերի համակարգող Նարինե Կարապետյանին, աշխատանքային օրերին, ժամը 9.00-18.00; հեռ. 540199; ֆաքս 580299; URL <http://www.avla.am>:



Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա
Հասցե՝ Նալբանդյան 7, բն. 2
Երևան, Հայաստան, 0010

Ինֆորմացիայի ազատության կենտրոն
2 Հասցե՝ Բուզանդի 1/3
Երևան, Հայաստան, 0010

Օրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից

Հեռախոս: +37410 54 01 99
Հեռապատճե: +37410 58 02 99

Հեռախոս: +37410 56 03 60
Հեռապատճե: +37410 56 03 60

Հայաստանում Եվրոպական միության պատվիրակություն
Հեռախոս +37410 54 64 94
Հեռապատճե +37410 54 64 95

Եվրոպական միության գործադիր մարմինը Եվրոպական հանձնաժողովն է:

«Եվրոպական միությունը կազմված է 28 անդամ պետություններից, որոնք որոշել են աստիճանաբար իրար կապել իրենց նորարական մեթոդը, ռեսուրսները և ապագան: Ընդարձակման 50 տարիների ընթացքում նրանք կառուցել են կայունության, ժողովրդավարության և կայուն զարգացման գոտի, պահպանելով մշակութային բազմազանություն, հանդուրժողականություն և անհատական ազատությունները: Եվրոպական միությունը միտված է իր ձեռքբերումներն ու արժեքները կիսել իր սահմաններից դուրս պետությունների և ժողովուրդների հետ»: